

Է. Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հ. ԴԱՊՐԱՋՅԱՆԻ ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԿԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ռուս-հայերեն բառարանագրությունյան պատմության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղում Հարություն Դադրաճյանի «Լիակատար բառարան ուսերենից-հայերեն»¹ աշխատությունը: Մինչ այդ հղած ռուս-հայերեն (ինչպես և հայ-ուսերեն) բառարանները, ընդգրկելով կամ դպրոցական կամ խոսակցական-տոնտրական լեզվի բառապաշարը, հետապնդում էին հիմնականում նեղ-գործնական նպատակներ և, որ զիջավորն է, անկատար էին այլ լեզուների ու արևմրտահայերենի բառարանագրական հարուստ փորձի օգտագործման ու նոր սկզբունքների մշակման տեսակետից:

Հ. Դադրաճյանն իր այս բառարանով դիտական հատատուն հիմքերի վրա դրեց ռուս-հայերեն բառարանագրությունը, ստեղծելով հայ բառարանագրության լավագույն նմուշներից մեկը:

Ռուս-հայերեն լիակատար բառարանի առաջին պրակների երևան գալը ջերմորեն ընդունվեց հայ մտավորականության և մամուլի կողմից: Վերջինս նշում էր նման բառարանի խիստ անհրաժեշտությունն ու հրատապությունը արևելահայերի կյանքում: Բառարանի քննադատները ըստ արժանվույն գնահատելով նրա դրական կողմերն ու նախորդների համեմատությամբ ունեցած առավելությունները², նշեցին և հղած բացերը, որպեսզի հաջորդ պրակները դերժ յինեն դրանցից (պետք է նշել, որ հղան նաև խիստ քննադատական հոդվածներ)³:

Հ. Դադրաճյանի բառարանը բռնեց ժամանակի քնությունը. չնայած բազմաթիվ հնարանություններին, այն հրկար ժամանակ օգտակար ծառայություն մատուցեց թարգմանչական և ուսուցողական աշխատանքներում և մեծ դեր խաղաց բառարանագրության հետագա զարգացման գործում:

• • •

Նախքան բառարանի էությունն անցնելը նշենք, որ այն կազմված է բնային սխտեմով, որը բացատրական, ինչպես և հրկիզվյան թարգմանական բառարանում բազմաթիվ անհարմարություններ է ստեղծում: Ռուսական դիտությունների ակադեմիայի կազմած բացատրական բառարանում⁴, որը հիմք

1 «Լիակատար բառարան ուսերենից-հայերեն», կազմեց Հ. Դադրաճյան, Քիֆիս, 1906:

2 «Նոր-Դար», 1902, № 110, էմմ. Նադարյանցի հոդվածը Մատենախոսություն բաժնում:

3 «Մուրճ», 1902, № 9, Ստ. Մալխասյանցի հոդվածը Մատենախոսություն բաժնում:

4 «Словарь русского языка», составленный вторым отделением Императорской Академии наук, выпуски 1-7, С.-Петербург, 1891-1900.

է հանդիսացել է. Դաղրաշյանի բառարանի ստեղծման համար, ընդունված էր բառահոգվածների տարբերակաւն դասավորման կարգը: Նույն ձևով էր կազմված նրա մյուս սկզբնաղբյուրը՝ Ն. Պ. Մակարովի ռուս-ֆրանսերեն բառարանը⁵, իսկ երրորդը՝ Ի. Յա. Պավլովսկու ռուս-գերմաներեն բառարանը⁶, կազմված էր բնային սիստեմով, որը և որդեգրեց է. Դաղրաշյանը:

Բուերի դասավորման բնային կարգը մեծ չափով խանգարում է բառարանից օգտվողին և ունի ակնհայտ թերություններ բառերի խմբավորման համակարգի տեսակետից: Հաճախ մի բնի մեջ հանդիպում են ռուսերենի այնպիսի բարդ բառեր, որոնց առաջին արմատը ընդհանուր է, սակայն երկրորդը բոլորովին տարբեր է: Ահա այդ բներից մեկը՝ Двѣ//мужие, -мужница, -мужняя, -мерный, -местный, -месячный, -надрезный, -нитка, -нитный, -ногий, -ножка, -ножный, Կան բառաձևեր, որոնք հեշտությամբ բարդություններ են կազմում ամենատարբեր բառերի հետ, և ահա այդ բոլորը է. Դաղրաշյանը միավորում է մեկ բնում. օրինակ, одно- բառաձևով բարդվող 110 բառից է կազմված այդ բներից մեկը. սկսած однокортный բառից, վերջացած однокухий բառով: Հաճախ էլ բառերի խմբավորումը կատարվում է ըստ նախածանցի՝ Без//глагольный, -глазый, -гласие, -гласность, -гласный, -гневне, -гневный, -гнездный, -гнездый և այլն:

Իհարկե, այստեղ խոսք չի կարող լինել ոչ իմաստային, ոչ ծագումնաբանական ընդհանրության մասին. նման մեխանիկական խմբավորումը արվել է տեղի խնայողության համար:

Բնային համակարգի մյուս բացասական կողմն այն է, որ այն հաճախ մղում է ավելորդ բառաստեղծման, որի հետևանքով բներում տեղ են գտնում բերականական պոտենցիայով հնարավոր, բայց սովյալ արմատին խորթ բարդություններ, որոնք այդպես էլ մնում են բառարանի էջերում, չդառնալով իրական լեզվի ակտիվ սեփականություն: Օրինակ, Мало//вренность, -гласие, -дельность, -заботливость, -рассудительный, росность, -светлость, -сильность, -составность.

Է. Դաղրաշյանը աշխատել է բառարանում ընդգրկել ռուսերեն լեզվի հիմնական բառամթերքը և հիշյալ սկզբնաղբյուրներից փոքր-ինչ ընտրողարար վերցրել է նրանց գրեթե ողջ բառացանկը, ուստի և աչքի է դարձում այն փաստը, որ բառարանը ծանրաբեռնված է բազմաթիվ նեղ կիրառություն ունեցող, օտարազգի, հնացած, գավառական, օամկական, մինչև իսկ գոհհիկ բառերով, որոնց լայն հոսքը պայմանավորված էր, անշուշտ, «լիակատարության» տենդենցով: Օրինակ, բառարանում տեղ են գտել այնպիսի բառեր, ինչպես адуляр, азур, анр, акстос, алей, базлук, бутень, впрень, глызать, гремкать, гюс, демественник, джонка, дивья, кадуцей, кутасик, лещедь, рамс, ранверс, рында, саллинг, сале, суффат և այլն:

⁵ «Полный русско-французский словарь», составленный И. П. Макаровым, издание девятое. С.-Петербург, 1900.

⁶ «Русско-немецкий словарь» И. Я. Павловского, третье издание, Рига, 1900.

Օղտվելով առիթից, շնորհակալություն ենք հայտնում բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Է. Գ. Տեր-Մինասյանին, նշված գրքերը մեկ տրամադրելու համար:

Համոզվելու համար, թե որքան արժեքավոր էր բննվող բառարանը իր ժամանակի համար, համեմատենք այն իր անմիջական նախորդի՝ Ար. Հովհան-նիսյանի աշխարհարար գրված ուսու-հայերեն բառարանի⁷ և Գ. Երեցփոխյանի գրաբար գրված ուսու-հայերեն բառարանի⁸ հետ, որը «աչքի առաջ է ունեցել»⁹ Հ. Գաղրաշյանն իր աշխատությունը ստեղծելիս: Առաջին առավելությունը Գաղրաշյանի բառարանի բառացանկի հարստությունն է, կյանքի առաջընթացը, գիտություն, տեխնիկայի ու մշակույթի զարգացումն արտահայտող մեծ թվով նոր բառերի առկայությունը: Օրինակ ассимляция, ассортимент, базис, вентиляция, варваризм, гастроль, гид, декадентство, демиург, жанр, импорт, интерпретация, колоратура, компрессор, круговорот, неполноправный, непосильный, обосновывать, обострять, пафос, плагиат, работяга, респектабельный, самосознание, санитар, сенсация.

Շատ արժեքավոր է բառերի քերականական բնութագրումը, որն ավելի կատարյալ է այս բառարանում. նշվում է, որ խոսքի մասին է պատկանում բառը, եթե գոյական է՝ սեռը, նշվում են շոշովովող (кашне շ.անհ.), բնդհանուր սեռի (жужжало 1 հարկ), միայն հոգնակի թիվ ունեցող (литки ի.հ.) կամ հոգնակիում ինքնուրույն իմաստ ունեցող (гирн հ. մարզերկաթներ, մարզաքարեր) գոյականները և այլն: Ցույց է տրվում բայի սեռը, կերպը, եղակի 1-ին և 3-րդ դեմքերի, անցյալ կատարյալի, անդրադարձ և կրավորական ձևերը (Возвести, -весть, -веду, -дут, անց. -вёл, -вела, -о; Вооружать -ся, Воодушевлять -ся).

Բայերի քերականական ձևավորումը ամբողջացնելու լավ միջոց է խրնդ-բառաթխան նշումը՝ ըստ օժանդակ հարցերի (Бредить 2. кем, чем. Винить кого, за что, в чём) և նախածանցների նշումը՝ ըստ բայի առանձին նշանակությունների (Топтать 1. (прит-, раст-) տրորել, բնդտանել, կոխտանել т. траву. 2. (выт-) տրորել, պատրաստել т. глину. 3. (ст.) մաշել, փչացնել т. сапоги. 4. (зат-) կեղտոտել, աղտոտել, ցեխոտել (т.пол), որոնք Հ. Գաղրաշյանի ներմուծումն են հայ-ուսուսերեն բառարանագրության մեջ: Նշվում է նախդիրների հոլովառությունը (вне նխդ., սեռակ. հոլ.), անհրաժեշտության դեպքում բերվում են ածականի համեմատության աստիճաններն ու կրճատ ձևերը (мельче բղդա-, мельчайший գերդ., жесткий (жесток, -стка, о) ածականից առանձնացվում են մակրաչները՝ непреклонно, непременно, неприметно և այլն:

Բառարանն ունի կանոնավոր շեշտադրություն:

Ընտրադրի բառերի մոտ նշվում է նրանց ծագումը:

Հ. Գաղրաշյանի բառարանում իր ժամանակի համար հիմնականում հաջողությամբ են լուծված բառի բաղմամաստության և համանունության պարբ-

⁷ «Բառագիրք ուսուսերեն-հայերեն», աշխատասիրություն Արիստղոմ Հովհաննիսյանցի, Տփլիս, հ. I, 1888 թ. հ. II, 1893 թ.:

⁸ «Բառարան, ի ուսաց լեզուի ի հայ, աշխատասիրեալ ի Գաբրիէլ Երեցփոխանց, Տփլիս, ի 1854 ամի:

⁹ Տե՛ս Հ. Գաղրաշյանի բառարանի նախաբանը, էջ 7:

լիմները: Այստեղ համանունները որոշակիորեն սահմանափակում են միմյան-
ցից ի տարբերություն նշված բառարանների, որոնցում դրանք հաճախ նույնա-
նում են բառի իմաստային տարբերակների հետ: Օրինակ՝ Փ. Երեմյանի
Душить բ. ն. հեղձուցանել, խեղդել, նեղել, համեմել (զմիս և այլն), ծխել
կամ սրսկել դանուշահոտ նյութ: Ա. Հովհաննիսյան՝ Душить բ. ն. խեղդել
// համեմել, ծխել կամ սրսկել (անուշահոտ նյութերով): Հ. Դադրաշյան՝
Душить 1. ն. խեղդել охотники удушили волка; 2. խեղդել, շունչը կտրել
душит кашель; задушить кого в своих объятиях. 3*. խեղդել, տանջել,
մաշել его душит злоба, тоска и. т. д. II. ս. օծել, սրսկել (հոտավետ
յուղերով):

Սակայն այս հարցում խախտված է սկզբունքի միասնականությունը: Վերը
բերած օրինակում քննարկված էր հոգմական թվանշաններով բաժանումը, որոնք
դրված էին մեկ բառածևով ներկայացված ուսերեն համանունի հայերեն
տարբեր համարժեքներից առաջ: Որոշ դեպքերում էլ դրանք դրվում են որպես
տարբեր բառածևեր ներկայացված ուսերեն համանուններից առաջ՝ 1. Мочи-
ти, վորություն, կարողություն: 2. Мочь, смочь կարել, կարենալ, կարողանալ,
չորել:

Այս նույն նպատակով երբեմն գործ է ածվում А, Б նշումը (որը ուրիշ
բներում բաժանում է բառի տարբերակները՝ Бить, Водить): Օրինակ.
Болтать А. 1. ն. (взб-) հեղուկը թափահարել, հարել: Б. ն. և շ. (выб-, наб-,
болтнуть) ոմկ. 1. դատարկ, փուշ, հիմարաբար խոսել. շաղակրատել...

Որպես համանուն են դիտվում նաև նույն գրությամբ, բայց տարբեր շեշ-
տով բառերը. ինչպես Замок 1. (зámok, -мка) 1. ամրոց, բերդ. 2. գղակա-
տուն, ապարանք. II. (замок, -мка) կողպեք: (Ի դեպ, նման բառերը Փ. Երեց-
փոխյանը և Ա. Հովհաննիսյանը մեծ հետևողականությամբ ներկայացնում են
որպես ինքնուրույն միավորներ): Եվ, բոլորովին անսպասելիորեն, որպես բաղ-
միմաստ բառի տարբերակներ բառարանում գտնում ենք. Клуб 1. գունդ, պա-
րույր, գնդաձև մարմին, բույա. 2. կծիկ. 3. (անզլ.) ա, կլուր, ժողովարան, բ,
ժողով, ժողովարան քաղաքական կուսակցության: Роль 1. (ֆր.) դեր-
главная р. 2. (գերմ.) գլան, ճախարակ. свернуть табак в ролл.

Այնուամենայնիվ, Դադրաշյանի բառարանի լեզվաբանական արժեքի
մասին են վկայում բազմաթիվ լավ կազմված բառարաններ, որոնցում հեղի-
նակը ձգտում է սպառիչ լիակատարությամբ ներկայացնել յուրաքանչյուր
բառ, որոշակիորեն սահմանափակել ու դասակարգել նրա իմաստային տար-
բերակներն իր բոլոր նրբերանդներով, պատկերավոր գործածումներով,
բառային և շարահյուսական կապակցությունների բազմակողմանի դրսևոր-
մամբ: Հմտորեն պատկերելով նշանակությունների ողջ համակարգը,
առաջին պլան մղելով բառի հիմնական գաղափարը, ապա ըստ օգտագործման
կարևորության տեղադրելով և մյուսները՝ ելնելով հիմք-լեզվի համաժամա-
նակյա կտրվածքից և ճշտորեն ներկայացնելով այդ ամենը հայերենում, Հ.
Դադրաշյանը նախորդների համեմատությամբ անհամեմատ հարստացրել է
իր բառարանը և ստեղծել բառի իմաստային մշակման բազմաթիվ լավ նմուշ-
ներ: Համեմատենք մի քանի բառահոգվածներ. Փ. Երեմյանի Вид գ. ա.

դեմք, երես, կերպ, ձև, տեսիլ, հայեցված. երևույթ. տեսակ. նմանություն. պատկեր. դիտավորություն. գլխագիր կամ թուղթ ինչ վկայական: Ա. Հովհաննիսյան՝ Внѣ, Կ. Կ. Դեմք, երես, տեսք, նայվածք, կերպ, ձև, նմանություն, պատկեր, ստվերագիր // դիտավորություն // տեսակ (կենդանիների և այլն), // վկայական: Հ. Դադբաշյան՝ Внѣ Կ. 1. տեսք, կերպարանք, նմանություն. 2. մաս. ձև, պատկեր. 3. տեսարան. 4. տեսանելի լինելը, երևալու հնարավորություն. (В, на, с, из, под, для, при նախդիրների հետ հաճախ մակբայորեն է թարգմանվում). 5. տեսակ (կենդանիների, բույսերի, զաղափարների). 6. տեսագիր, գլխագիր, անցաթուղթ, վկայական. 7. բերակ. ձև (բայերի գործողության, որ հատուկ է միայն ուսաց լեզվին). 8. Внѣшн. ակնկալություն, դիտավորություն, հաշիվ. նշաններ:

Ինչպես երևում է օրինակից, այս հարցում (և շատ այլ դեպքերում) Հ. Դադբաշյանը իրավացիորեն ավելի ճիշտ է համարում Գ. Նրեցփոխյանին և ավելի շատ առաջնորդվում է նրանով, քան Ա. Հովհաննիսյանի բառարանով:

Բառարանի հատկանշական և գնահատելի կողմերից է այն, որ բառի իմաստային բնութագիրը հաճախ վարպետորեն լրացվում է նրա բնորոշ փոխաբերական տարբերակների միջոցով: Օրինակ, Գ. Նրեցփոխյան՝ Апогей. հեռակետ (բառաստեղաբաշխից): Ա. Հովհաննիսյան՝ Апогей հեռակետ, հետին ծագ (աստղերի): Հ. Դադբաշյան՝ Апогей աստղ. 1. տարբերություն (լուսնի շրջանառության մեջ ամենահեռավոր կետը երկրագնդից). 2.* զազաթնակետ, ծայրահեղ, բարձրագույն աստիճան:

Հ. Դադբաշյանը բառի բաղմիմաստության հետ կապված դժվարություններն ու նրա ստեղծած անորոշությունները աշխատել է լուծել ու պարզել բնորոշ օրինակների, բացատրության և համանունների միջոցով: Դա ճիշտ միջոց է, և, շնայած դրան, հեղինակը միշտ չէ, որ կարողացել է խուսափել թերություններից: Гл҃ухой ածականի մոտ, օրինակ, բերված է վեց հիմնական իմաստային տարբերակ, երեք նրբերանգ, մի քանի փոխաբերական իմաստ, կայուն կապակցություններ, և բոլորը թարգմանված են առանձին ու հաճախ նկարագրական ձևով, ընդ որում դրանցից շատերի համար ընդհանուր է խուլ համարժեքը:

Նույնը և Держать բայը, որի 4 տարբերակների մոտ կրկնվում է պահել բառը, բազմաթիվ հոմանիշներով ու միանման օրինակներով: Закл҃ючать բայի մի քանի տարբերակների համարժեքները ևս խիստ ծանրաբեռնված են հոմանիշներով, որոնք լիովին կարելի էր փոխարինել ամփոփել բառով:

Նման դեպքերում կարելի է զգալիորեն համառոտել բառահոգվածները, ելնելով երկու լեզուներում բառերի իմաստային տարբերակների ընդհանրությունից և միայն վերջիններիս թողած բացերը լրացնել նոր հայերեն բառով: Իսկ իմաստային տարբերակների սահմանները պարզաբանել բնորոշ կոնտեքստով, որի թարգմանությունը հարստացնել հայերեն հոմանիշներով:

* * *

Հ. Դադբաշյանի բառարանը յուրատեսակ թարգմանական-բացատրական բառարան է¹⁰: Այստեղ ուսանող բառի դիմաց կարելի է գտնել և հայերեն

10 Գ. Գ ա ս տ ր յ ա ն, Հայ բառարանագրության պատմություն, անտիպ: Շնորհակալու-

թարգմանական բառեր, և բացատրություն առանց հայերեն համարժեքի, և բացատրություն հայերեն համարժեքի կամ հայերենում ընդունված օտար բառի հետ միասին: Ժամանակի անհետաձգելի պահանջները և հայերենի տերմինաբանության անդարդացած փճակն էին թելադրում հեղինակին որոշ զեպրերում բավարարվել միայն բացատրությամբ՝ չտալով հայերեն բառեր, քանի որ այդպիսիք գտնելու կամ կերտելու համար անհրաժեշտ էին երկար տարիների քրտնաջան պրպտումներ և բառաստեղծման մեծ ճաշակ ու հմտություն: Եվ, չնայած դրան, բազմաթիվ նոր հայակերտ բառեր են մուտք գործել բառարանը և դարձրել այն հարազատ ժամանակի ոգուն: Օրինակ, Латинизм 'Ֆ. Երեցվուխյան' ոճ կամ հատկություն լատին բարբառո, Ա. Հովհաննիսյան' ոճ լատին լեզվի, Հ. Գաղրաշյան' լատինարանություն, Писака 'Ֆ. Երեցվուխյան' ...հեղինակ անհմտ, Ա. Հովհաննիսյան' ...անշնորհ հեղինակ, ճգմող: Հ. Գաղրաշյան' ...Հ. գրչակ: Абзац 'Ֆ. Երեցվուխյան' շունի, Ա. Հովհաննիսյան' նոր քող, Հ. Գաղրաշյան' (զերմ.) 1. պարբերություն, նոր տող: Алгебра 'Ֆ. Երեցվուխյան' համարողություն նշանագրով, ալգերա, Ա. Հովհաննիսյան' գրահաշիվ, ալճերա, Հ. Գաղրաշյան' ալգերա, հանրահաշիվ, գրահաշիվ և այլն:

Այս հարցում ևս հեղինակը հանդես է բերում որոշ անհետևողականություն ու անփութություն և հաճախ չի օգտագործում այնպիսի հայերեն բառեր, որոնք վաղուց ի վեր հայտնի են բոլորին և տեղ են գտել հենց իր հայ-ոտսերեն բառարանում: Այսպես, Витрина բառը նա բացատրում է հինգ տողով, առանց հայերեն բառ տալու, մինչդեռ կար ցուցավելկ-ը: Панист, -ка գրում է՝ դաշնամուր ածող, դաշնամուրի վրա խաղացող այր, կին, անտեսելով վաշնակա-նաւ-ը և վաշնակաճառունին: Десерт-ի դիմաց՝ ղեսերտ (մրգեղեն, քաղցր և թեթև կերակուրներ, որոնք մատուցում են ճաշի վերջը), մոռանալով ալանդեր բառը, Апостроф-ի մոտ՝ ապոստրոֆ նշանը (/), որ ցույց է տալիս ձայնավորի հապավումը, դուրս թողնելով ապարաց-ը: Հաճախ էլ Հ. Գաղրաշյանը բոլորովին անտեսում է Ա. Հովհաննիսյանի բառարանի հաջող թարգմանությունները և կամ բացատրում է բառը, կամ թարգմանում ոչ այնքան համապատասխան բառերով: Պետք է նշել, որ անվտանգությունը Ա. Հովհաննիսյանի բառարանի նկատմամբ այս հարցում մեծապես փնասում է Գաղրաշյանի բառարանին, որի հեղինակը, գիտակցելով նրա ակնհայտ թերությունները, պետք է յիշվին օգտվել այն ամենից, ինչ ճիշտ էր ու հարազատ աշխարհարար հայերենին: Օրինակ, Материк բառը Հ. Գաղրաշյանը բացատրում է այսպես՝ ցամաք, ցամաքալիճ հող, երկիր (ջրից շրջապատված), մինչդեռ նրա նախորդի մոտ զեղեցիկ հայերենով գրված է՝ մայր-երկիր, մայր-ցամաք: Изобретательность Գաղրաշյանը թարգմանել է հնարողություն, հնարելու, գտնելու կարողություն, ձիրք, շնորհ, մինչդեռ Ա. Հովհաննիսյանն ունի նկարագրություն, նկարամտություն, Баррикада (ֆր.) բարիկադ, ճանապարհակապություն, ճանապարհափակություն և վեց տող բացատրություն, մինչդեռ կարելի էր տալ ավելի համառոտ և զեղեցիկ՝ պատվաբ (որ ինքը գործ է ածում բացատրության մեջ) և պատենշ (որ ունի Ա. Հովհաննիսյանը):

Ի զեպ, բացատրությունների և նկարագրության մասին: Նման բառարանում դրանք որոշակի զեպրերում օգտակար են և նույնիսկ անհրաժեշտ, ինչ-

թյուն ենք հայտնում բանասիրական գիտությունների թեկնածու Դ. Գառաբյանին, որը մեզ տրամադրեց կարդալու իր մեքենայի աշխատությունը:

պես մենք կտեսնենք ստորև Սակայն դարձյալ կարևոր է շափի պահպանումը: Հ. Գաղաղականը այս գեղարվեստ է բնական է ծայրահեղության մեջ և կարծես բոլորովին անտեղյակ հայկական ֆեոդալականության ու հայերենի իրական հնարավորություններին, տեղի-անտեղի երկար ու ձիգ բացատրություններ է տալիս, որից այն ազատությունն է ստացվում, թե առաջը գրված է ուսուցիչների բացատրական բառարան՝ գրված հայերեն լեզվով: Խոսքը այն նեղ կիրառություն ունեցող բառերի մասին չէ, որոնց համար բոլորովին անհրաժեշտ չէր վեց-յոթ տող բացատրություն տալ (ВОЛЧОК, ВОЛОК, НАНТА, ГАЛИОТ), այլ այն, երբ Борозда բառի զիմաց գրում է՝ 2. (բանջարանոցներում) ա. ածուների մեջ գտնվող անցք, ճանապարհ, ածուամեջ և բ, ածուամեջի երկու կողմից բանոց բանջարեղենի շարքերը. (կարելի էր իմաստները տեղափոխել և գրել ա. ածու, բ. ածուամեջ): Возлагать բառի զիմաց՝ 1. մի բան մի բանի կամ մեկի վրա դնել, ձգել (կարելի էր գրել՝ վրան դնել): Болтать А. 2. чем մի բանով օգի մեջ գետնուց շարժում անել (պետք էր գրել՝ քաղաքում): Եվ կամ այն, երբ հայերեն համապատասխան բառը գտնելը կամ կազմելը մեծ դժվարություն չէր ներկայացնում, ինչպես հետևյալ օրինակներում՝ Возмужать արբույրի, առնական հասակի հասնել, չափահաս դառնալ (ինչու ոչ առնականալ): Адресат նա, որի անունով նամակը կամ մի այլ թուղթ, պատվեր հասցեագրված է (ինչու ոչ՝ հասցեակր): Мединлавиный պղինձ հալող, պղինձ հալելու (ինչու ոչ պղնձալուծական): Температура ջերմության աստիճան, օդի բարեխառնություն (ինչու ոչ ջերմաստիճան):

Ի տարրերություն նախորդ բառարանների, Գաղաղականի բառարանում նկատվում է ուսուցիչների բառարանաչարի անբակտելի տարրը դարձած օտարազգի բառերի որոշ մասը հայերենում ևս օրինականացնելու ոչ անօգտավետ ձգտում: Դրանք մուտք են գործում բառարան, հաճախ բացատրություն, հաճախ գրվելով հայերեն ավելի պակաս գործածական կամ հասկանալի բառի կողքին, ինչպես Спирт սպիրտ, գինու ոգի, ալկոհոլ. Декан գեկան 1. պրոֆեսոր, որին հանձնարված է ֆակուլտետի նախագահությունն և ուսումնական մասի հսկողությունը. 2. միջնադարյան կաթնիկ միաբանության կանոնիկոսը: Термин (լատ.) տերմին (գիտական կամ արվեստագիտական որոշ միտք արտահայտելու համար բնորոշված խոսք, բառ կամ դարձվածք): Техника (հն.) 1. տեխնիկա, արվեստագիտություն. 2. տեխնիկա (որևէ գործի արտադրություն): Սակայն այս գեղարվեստ է հեղինակը գուրա է գալիս անհրաժեշտության սահմաններից, հաճախ չարաչափ օտար բառերի գործածությունը, դրանք դերագրանով լայնորեն տարածված և վաղուց բաղադրացիության իրավունք ստացած հայերեն բառերից: Դրա առաջին ապացույցը այն է, որ, որպես կանոն, նման դեպքերում Հ. Գաղաղականը նախ հայատառ կրկնում է օտարազգի բառերը, հաշվի չառնելով նույնիսկ նրանց խիստ անբարեհնչուն լինելը: հայերենի համար, և ապա ապիս է կամ հայերեն համարժեքը կամ բացատրություն օրինակ. Барьер (ֆր.) բարիեր 1. արգելիք, իրրե արգելիք ձգած դերան... Гардеробмейстер (գերմ.) դարդերոմեյստեր, արքունի հանդերձապահ, -ձապետ: Кастрюля (գերմ.) կաստրոլ (պտտիկ պղնձե աճան կերակուր եփելու, չալխանա): Абажур (ֆր.) արամուռ 1. լուսակալ, լուսարդել, լուսամփոփ: Факел (հն.) ֆակել:

կերոն, լապտեր, ջահ և այլն: Մյուս ապացույցը օտարազգի բառերի լայն դորժածումն է բառարանում ինչպես այլ բառերի թարգմանության ու բացատրության ժամանակ, այնպես էլ հեղինակային տեքստում, ընդ որում հեղինակը պասիվության է մատնում հենց իր առաջարկած հայերեն համարժեք բառը, չդնելով այն շրջանառության մեջ: Այսպես, *дипломат* (ֆր.) զիպումատ, զիվանագետ, *дипломатия* զիպումատիա, զիվանագիտություն, *дипломатический* զիպումատիական, զիվանագիտական, *дипломатически* զիպումատիարար, խիստ քաղաքավարի կերպով... *Магазин* (ֆր.) 2. մադագին, շքեղ խանութ, կրպակ, *книжный м.* գրախանութ, *внутрина* բառի բացատրության մեջ՝ ապակի խփանով արկղ թանգարաններում, գրադարաններում, մադագիններում...

*
*
*

Հեղինակը հաճախ ուսերեն բառի զիմաց բերում է օտարեր ոճական բնույթ ունեցող հայերեն հոմանիշներ, մեծ մասամբ նշելով դրանց սահմանները՝ *գր.* (գրաբար), *տճկ.* (տաճկերեն), *զվո.* (զավառական), *ումկ.* (ռամկական) կամ ,...,, նշանը, որը ևս նշանակում է ռամկական կամ զավառական և այլն: Սակայն այս միջոցին անհրաժեշտ էր դիմել միայն խիստ անհրաժեշտության դեպքում, իսկ *Դադրաշյանի* բառարանում այն խիստ չարաչափում է (և հաճախ առանց անհրաժեշտ նիշի)՝ ճիշտ է, «նախարանում» 2. *Դադրաշյանը* հայտնում է, որ հայերեն լեզվի վիճակից ու ընթերցողների վարդաքման աստիճանից ելնելով է մեծ տեղ տալիս զավառարանություններին ու ռամկաբանություններին, սակայն իրականում դա արդարացում չէ գիտական հիմունքներով կազմվող լիակատար բառարանի համար, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ նշված ոճերից զուրկ չէ նաև հեղինակի անհատական լեզուն, որից մեծ չափով տուժում են բներում եղած բացատրություններն ու ձևակերպումները: Ահա թե ինչպիսին է լեզվի պատկերը բառարանում. *Докупивать* ուտել կամ խմել պրծնել, անուշ անել պրծնել, վայելել պրծնել: *Переливать* 1. մի տեղից մյուս տեղ ածել, թափել. 3. խիստ շատ, չափից դուրս շատ ածել (այնպես, որ ածածը թափվի). *Дешеветь* արժանանալ, ընկնիլ, ցածրանալ (գնի մասին): *Аккомпанировать* երգակցել, նվագակցել, երգողին կամ առողին երաժշտական զործիքի վերա ուղեկցել: *Брошка* բրոշկա, բրոշ (կանանց արդուզարդի պատկանելիք, որ շուրջում կրում են ճտին կամ կրծքին):

Եվ եթե հեղինակը, վախենալով, որ գրական բառը կարող է անհասկանալի լինել ժողովրդին, այն պարզաբանում է բարբառայինով, ապա պետք է բավականանար մեկ անգամ միայն այն նշելով և այնուհետև նույնանման բառերի թարգմանության ժամանակ կրկնել գրական բառը, իսկ 2. *Դադրաշյանը* վարվում է ճիշտ հակառակ ձևով՝ գրական բառը հարեանցիորեն հիշատակելուց հետո բազմաթիվ անգամ կրկնում է բարբառայինը, դրանով կարծես քաղաքացիության իրավունք տալով նրան և մոռացության մատնելով գրական ձևը: *Օր.* *Двор* 1. տան բակ, հայաթ՝. *дворик* պտիկ բակ, հայաթ՝. *дворище* մի տնային բակ, հայաթ՝. 2. տնատեղ, հայաթի տեղ: *Мост* կամուրջ, կարմանջ: *Акведук* 1. կարմունջ, կարմնջանման շինություն..., ջրակարմունջ: *Мужь* 2. ամուսին, էրիկ՝. *выходить* замуջ

մարդու գնալ. выдвигать замуж մարդու տալ. замужем մարդու գնացած, կարգված, առնակին լինել:

Բառարանը տառացիորեն տեղում է բարբառային բառերի ծանրության տակ, ամեն քայլափոխում հանդիպում են այնպիսի ձևեր, ինչպես՝ ազդակ, ազուտ, բոյ, բոլ, բոլթա տալ, գյաղուկ, կակալ, դանդաղոշ, դարդ, չափ դնել, ճոթ ըլիլ, ծուլիծուլ, փայտոն, ծրծրանք, շոփ գցել, կծիկը դրեց, աշկարա և այլն, որից հետո դժվար է ընկնել նաև գոհակաբանությունների մեջ, որոնք ևս քիչ չեն բառարանում...

* * *

Թարգմանական բառի փոխարին կամ նրան զուգահեռ բացատրություն տալու անհրաժեշտությունը բառարանում երևան է գալիս հիմնականում տվյալ էտապում դեռևս ոչ հանրածանոթ իրականությունների, գիտության, փիլիսոփայության, արվեստի բնագավառին վերաբերող կամ վերացական հասկացությունների արտահայտող օտարազգի բառերի թարգմանության ժամանակ: Ընդ որում Հ. Դադրաշյանը ըստ անհրաժեշտության դիմում է բառի լեզվադրական ու տրամաբանական բացատրության և իրի կամ երևույթի ու հասկացության գիտական կամ հանրագիտական սահմանման մեթոդներին:

Օրինակ՝ Демург (հն.) դեմիուրգ. 1. փիլ. (ըստ Պլատոնի և ուրիշների) բարձրագույն էակ, աշխարհիս ստեղծիչը. 2. գնեստիկների քարոզած ստորին հրեական աստվածը, նյութական պիլծ աշխարհի և ախտակիր մարդուս ստեղծիչը: Молекула (լատ.) մուլեկուլ (ամենափոքր մասնիկներ, որոնց որևէ մարմին բաժանվում է առանց յուր քիմիական բաղադրությունը փոխելու): Тенденция (լատ.) տենդենցիա, ձգտում, նկրտում որոշ նպատակի համար (երբեմն հակառակ ճշմարտության): Пибретто (իտ.) լիբրետո (գրքույկ, որ պարունակում է օպերայի կամ բալետի բովանդակությունը կամ բացատրությունը):

Այդ բացատրություններն ու սահմանումները հաճախ այնքան ճիշտ են և այնպես լիարժեք են ներկայացնում ոչ միայն բառը, այլև անձանոթ երևույթն ու հասկացությունը, որ հանրագիտարանի բնույթ է հաղորդում բառարանին:

Անհրաժեշտ բացատրություններ են տրվում ուսական կյանքին բնորոշ իրականությունների պարզաբանման համար՝ Духоборец (հաճախ հոգն.) դուխոբորեց, ներ, «հոգու մարտիկներ» (ուս հերձվածողներ, որոնք ժխտում են դոյություն ունեցող եկեղեցին յուր արտաքին ծեսերով, արարողություններով և քահանաներով: Ժխտում են նաև երդումն, գինվորական ծառայությունը և այլն: Ընդունում են միայն ներքին եկեղեցի, ներքին հավատ):

Տեղին են և օգտակար կենցաղի մեջ նոր արմատավորվող իրերի անվանումների համար տրվող բացատրությունները: Օրինակ, Билт 1. կապիչ, վիրակապ (ժապավենաձև փալաս վերքը կապելու): Ванна 1. երկարաձև, երկու կողմից սովորաբար կլոր, խորունկ տաշտ լողանալու համար: Консервы 2. կոնսերվ. (մրգեղեններ և ուտելիղեղեններ, որ առանձին կերպով պատրաստելով և լցնելով ժելատի տուփերի մեջ պահում են): Пассажир (ոչ հետևակ, այլ երկաթուղով, հանրակառքով և այլն անցնող) ճանապարհորդ, անցորդ: Фарш ֆարշ (մանրած և համեմած միս, որով մորթած հավի կամ աղափնու փորը լցնում, ապա ապակում են):

Դադրաշյանի բառարանի առավելություններից մեկը օրինակներն են, որոնք չափազանց կարևոր են երկլեզվյան բառարանում: Սակայն պետք է նախապես նշել, որ Հ. Դադրաշյանը չի բերում օրինակներ գեղարվեստական, պիտական, բաղաբական գրականությունից, մամուլից և այլն: Այդպիսի օրինակներ չունեն նաև Պավլովսկու ու Մակարովի բառարանները, որոնց այս հարցում ևս հետևել է Դադրաշյանը, օրինակները քաղելով մեծ մասամբ առօրյա խոսակցական լեզվից: Իմ դրանք բավական դինամիկ, արտահայտիչ ու դիպուկ մանրանկարներ են, որոնք ոչ միայն օգնում են ցուցադրելու բառի իմաստային նրբերանգները, այլ հաճախ իրենք են իրականացնում այդ նրբերանգների տարբերակումը: Այս ձևով հնարավորություն է ստեղծվում անհրաժեշտության դեպքում խուսափել բառիմաստի ավելորդ տրոհումից, չհնարել չինծու-արհեստական իմաստային տարբերակներ, այլ բնորոշ օրինակների միջոցով ճշտել ու սահմանափակել բառի գործածության իմաստային ու ոճական շրջանակները: Որ. Редкий шд. 1, ցանցառ, նոսր, ոչ խիտ р. лес, р холст; р-е волосы; 2. հազվագյուտ, սակավագյուտ, р-е дарование; р-ая книга; р. человек; р. день проходит без ссоры հազիվ է օր պատահում, որ առանց կովի անցնի: Гнётся կորանալ, կռնալ, ծալվիլ, ծովիլ, палка гнётся; деревья гнутся от бури; г. перед кем-либд մեկի առաջ սողալ, սաորաքարշաթյուն անել:

Օրինակների միջոցով հեղինակը կարողանում է ցուցադրել բառի լեքսիկական պոտենցիալ կապակցելիությունը, նրա հաստատուն և հնարավոր իմաստային կապերը:

Բառարանում քիչ չեն նաև յուրօրինակ փիլիսոփայական-բարոյախոսական, ճանաչողական, խրատական բովանդակությամբ օրինակները, ինչպես՝ Жизнь есть постоянная смена радостей и горестей (Смена բառի մոտ), Излишняя снисходительность портит детей (Портить բառի մոտ) և այլն:

Բավական հաճախ են հանդիպում և եկեղեցական, կրոնական բովանդակությամբ օրինակներ, որոնք մեջ են բերվում բացառիկ ճշգրտությամբ և թարգմանվում գրաբար, որի հետևանքով բառարանը բավական հնացած տեսք է ստանում:

Հ. Դադրաշյանի «Լիակատար բառարանի» մյուս արժանիքը, անկասկած, դարձվածաբանական հարուստ նյութն է: Այն շատ բազմադան է և որոշակիորեն տարբերակված է աշխատության մեջ: Բավական ստվար խումբ են կազմում ժողովրդական առածներն ու ասացվածքները, որոնց ընտրության համար Հ. Դադրաշյանն օգտվել է «Նախաբանում» նշած բառարաններից բացի, նաև Վ. Դալի բացատրական բառարանից¹¹:

¹¹ «Толковый словарь живого великорусского языка Владимира Даля», второе издание, С.-Петербург, 1880—1882.

Քիչ չեն և անտիկ դիցաբանությունից, առասպելներից, դասական դրականությունից լեզվի մեջ մտած դարձվածքներն ու ոճերը՝ Геркулесовы столпы, Гомерический смех, Домоклов меч, Эолова арфа, Арнадинна нить, Аттическая прония (соль)։

Գրեթե յուրաքանչյուր բառարանում բառի հիմնական իմաստը կամ իմաստային տարբերակները պարզաբանելուց հետո տեղադրվում են տվյալ բառով կազմվող բնորոշ կայուն կապակցությունները, դարձվածքներն ու ոճերը, առածներն ու ասացվածքները, որոնցից դժվարները թարգմանվում են հայերեն, ընդ որում հեղինակը կարողացել է վարպետորեն գտնել հայերեն նույնիմաստ կապակցությունն ու դարձվածքը, առածն ու ասացվածքը և միայն տեղ խնայելու համար չի թարգմանել հեշտերրու Օրինակ՝ Рак բառի տակ он знает, где раки зимуют նա ամեն ծակուծուկ գիտե, նա շատ խորամանկ, շատ, «ետեկածն» է. он сел, как рак на мелн նա բոլորովին սնանկացել է, գրպանում կույիկ չունի. на безрыбьи и рак рыба (առծ.) անճարն է կերել բանճարը։ Роса բառով՝ Ему хоть плюй в глаза, а он говорит, что божья роса (դարձվ.) նա պատվասիրության զգացում չունի և այլն, և այլն։

Դարձվածաբանությունը նման բառարանում ինքնանպատակ չպետք է լինի։ Այն անպայման պետք է ծառայի երկլեզվյան բառարանի գլխավոր նպատակի իրագործմանը՝ որոշելու բառի իմաստը կամ իմաստային տարբերակները առաջին լեզվում և ճշտորեն արտահայտելու դրանք երկրորդում։ Յուրաքանչյուր նոր դարձվածք, բառակապակցություն, թե ոճ պետք է բացահայտի բառիմաստի նոր նրբերանգ, նոր, դեռևս չպարզաբանված կողմից մոտենա բառի իմաստային ու ոճական բնորոշմանը։ Այս տեսակետից բառարանը փոքր ինչ կազմում է՝ որոշ բառաբաներ ծանրաբեռնված են միանման, ոչ մի նոր բան չավելացնող ոճական արտահայտություններով։

* * *

Ի տարբերություն նախորդ բառարանների, այստեղ մեծ տեղ է հատկացված տերմինաբանությանը, որը աչքի է ընկնում իր գիտական մշակվածությունով և մասնագիտական նշումների հարստությամբ։ Հանքային, կենդանաբանական, բուսաբանական և բժշկական տերմինների մոտ զրվում է և նրանց լատիներեն անվանումը։ Առաջին երեք մասնագիտություններին վերաբերող հայերեն տերմինների ընտրության համար Հ. Դադբաշյանը օգտվել է Հ. Գ. Մենելիշյանի հայտնի աշխատություններից¹²։ Բառարանի հայերեն տերմիններից շատերը մինչև այժմ չեն կորցրել իրենց կենսունակությունը, սակայն ինչպես մյուս դեպքերում, այս անգամ ևս հեղինակը թերացել է և խուսափել հայերեն տերմիններ ստեղծելուց, դերադասելով տալ նրանց նկարագիրը կամ բացատրությունը։

Բերենք տերմինների թարգմանության մի քանի օրինակներ. Гелиограф արևագիր 1. աստղբ. արևագիր, արեղակագիր (դործիք արեղակի նկարը ստանալու). 2. օդբ. դործիք, որ ցույց է տալիս արեղակի փայլման տեղությունը։

¹² Կենդանաբանություն, ի Հ. Գարրիել վ-Ն Մենելիշյան, Վիեննա, 1897։ Բուսաբանություն, ի Հ. Գարրիել վ-Ն Մենելիշյան, Վիեննա, 1897։ Հանքաբանություն, ի Հ. Գարրիել վ-Ն Մենելիշյան, Վիեննա, 1897։

3. ողմ. գործիք արեգակի ճառագայթների միջոցով այլևայլ տեղեկություններ հաղորդելու: Кореда կնդ. Bostrichus, կեղևակեր, քանդակագործ ճճի: Меланит հնդ. mélanite, մեկանիտ (սևաքար): Нард рс. Nardostachys iatamansi, բուն փաղանգամուշկ. նարդոս: Маргарин 1. քիմ. մարգարին, ճարպանյութ: Мажор (ֆր.) երթ. մեծագույն եղանակ կամ երգածայն:

*
*

Ամենաբազմազան բառապաշարի ընդգրկումը բառարանում հանգեցրել է և մեծ քանակությամբ նշումների կիրառությանը: Բառերի ոճական բնութագրումը ընդհանրապես անհրաժեշտություն է ցանկացած բառարանում, քանի որ այն մեծացնում է վերջինիս գիտական ու գործնական արժեքը, ընթերցողին մատուցելով ոչ թե լառերի մի պարզ հավաքածու, այլ նորմավորված համակարգություն: Հ. Դադրաշյանի բառարանում նկատվում է ոճական նշումների կիրառման միակողմանիություն՝ քիչ թե շատ կանոնավորապես առանձնացվում են ցայտուն դրսևորում ունեցող հնացած (հնց.) го́йный, գավառական (գվո.) биро́к 1, եկեղեցական-սլավոնական (եկ—սլ.) соборе և էքսպրեսիվ գունավորում ունեցող ռամկական (ռմկ.) блясничать, ինչպես և հավելյալ (հվլ.) домкше, նվաղական (նվաղ.) коло́дочка, փաղաքշական (փղքշ.) голубушка, նախատական (նխտ.) мазилка և նման բառային շերտերը: Սակայն շատ դեպքերում բացակայում է խոսակցական, ցածր ոճին պատկանող բառերի անջատումը շեղոք բառաշերտից, իսկ սա, պետք է ասել, թարգմանական բառարանի նորմատիվության կարևոր հանգամանքներից մեկն է: Եվ ընդհանրապես, բաղմամբիվ են առանց որևէ նշումի բերված այնպիսի բառերը, որոնց՝ սովորական, շեղոք շերտին չպատկանելը ակնհայտ է: Օրինակ, ана́ла, ана́ла, ана́лгезия, бави́ться, байба́к, гла́духа, заги́бень, закру́та, излома́й, испо́ла, каню́чить, колупа́ть, кут, ле́ска, макла́к, мо́лодайка, ланита, ла́ты, маку́ша, ме́леда, надое́дала, оберу́кни, осла́ба, преще́ние, разведе́нка, серча́ть, слюбля́ться, токмо, хвора́ть, хире́ть և այլն:

*
*

Այսպիսով, Հ. Դադրաշյանի ուսու-հայերեն լիակատար բառարանը կարևոր ներդրում էր հայ բառարանագրության բնագավառում՝ XX դարի առաջին տասնամյակում: Այն աչքի ընկնող առաջընթաց քայլ էր ուսեսերենին առնչված նախորդ բառարանների համեմատությամբ թե՛ բառային նյութի հարստությամբ ու լեզվական փաստերի բազմակողմանի ընդգրկմամբ, թե՛ բառերի իմաստային, ոճական ու քերականական բարձրարժեք մշակմամբ:

Բառարանում ժամանակի լեզվաբանական նվաճումներին համասլատասխան հաջողությամբ են լուծված բառարանագրական պրակտիկայի դժվարին շատ հարցեր: Եվ չնայած այն ունի մի շարք բացեր ու թերություններ, այնուամենայնիվ, երկար տարիներ մեծ դեր է խաղացել թարգմանչական, ուսուցման գործում, ինչպես և հետագա բառարանագրական աշխատանքներում:

Բառարանն ունի ուսանելի շատ կողմեր և արժանի է լուրջ ուշադրության ու հետազոտման: